ԿՐՈՆԵԲԵՆԵՍԻՐԵԿԵՆ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(19 հուլիսի, կիրակի, 1998 թ.)

«Քրիստոս Աստուած մեր շնորհեալ մեզ
ընդ Պետրոսի եւ ընդ որդւոցն Զեբեդեայ.
արժանաւորիլ հում աստուածային տեսլեանդ»
(ՇԱՐԱԿԱՆ)

Սրբազան շարականագիրը, որ բանաստեղծությամբ նկարագրել է Վարդավառի տոնը, իր ժողովրդին, հետևորդներին և հավատացյալներին է գիմում Քրիստոս Աստծու անունով և ասում. «Քրիստոս Աստված մեր, շնորհիր մեզ Պետրոսի և Զեբեդյան եղբայրների՝ Հակոբի և Հովհաննեսի հետ արժանավոր լինել քո աստվածության տեսիլին: Որովհետև Վարդավառը, լինելով հեթանոսական մի տոն Հայ ժողովրդի համար, հենց Գրիգոր Լուսավորչի օրից վերածվել է քրիստոնեական տոնախմբության՝ նվիրվելով Քրիստոսի պայծառակերպությանը: Ի՞նչ էր հեթանոսական այս տոնը: Հին Հայաստանում մեր նախահայրերը Վարդավառի տոնին (*Վարդավառ* գենդերեն նշանակում է *ջուր սրսկել*) հեթանոս սրբավայրերում, ըստ հայկական տոմարի, Նավասարդի մեկին՝ օգոստոս 11-ին, խմբվում և տոնում էին Վարդավառը: Հետագայում, որոշ պատճառներով, օգոստոսի 15-ին տոնախմբվող Աստվածածնի տոնը հետ եկավ և սկսեց տոնախմբվել Քրիստոսի երաշափառ Հարությունից հետո, 14-րդ կիրակին, այսինքն՝ Քրիստոսի Հարությունից հետո եկող 7-րդ կիրակի օրը նշվում է Հոգեգալուստը, իսկ Հոգեգալուստից հետո 7-րդ կիրակին Վարդավառի տոնն է, մեր Տիրոջ Պայծառակերպության տոնը: Այդ տոնի առիթով հայերը հավաքվում էին զանազան վայրերում և միմյանց վրա մաքուր ջուր սրսկում:

Այդ օրը մարդիկ նաև աղավնիներ, տատրակներ էին բաց թողնում: Դա հեթանոսական տոնախմբությունից մնացած սովորույթն է: Սակայն Սուրբ Գրիգոր Լուսավորիչը այդ տոնին միացրեց նաև մեր Տիրոջ Պայծառակերպության գեղեցիկ դրվագի տոնախմբումը: Այդ մասին Ավետարանում կարդում ենք, որ Հիսուս Իր աշակերտներից ամենատարեցներին՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, որ ամենասիրելիներն էին, վերցնելով, բարձրանում է Թաբոր լեռ: Երբ աշակերտները տարված խոսում էին, հանկարծ տեսնում են, որ Հիսուսի դեմքը արեգակի պես պայծառափայլում է, իսկ զգեստները՝ լուսարձակում: Այդ հրաշալի տեսիլքի վրա աշակերտները գլուխները խոնարհում են և չեն կարողանում նայել: Սակայն հետո տեսնում են՝ Մովսեսն և Եղիան կանգնած Հիսուսի աջ և ձախ կողմերում: Պետրոս Առաքյալը, զմայլված այս տեսարանով, շփոթված ասում է. «Ռաբբի, բարւոք է մեզ աստ լինել եւ արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ, եւ մի Մովսիսի, եւ մի Եղիայի» (ՂՈՒԿ. Թ 33): Այդ փառավորությունը, աստվածային տեսիլքը, փառահեղ, երկնային երևույթը աշակերտների համար զմայլագին երևույթ էր: Այդ իսկ պատճառով Պետրոսը չկամեցավ զրկվել այդ տեսարանից և խնդրեց, որ երեք վրան հաստատեն այնտեղ՝ մեկը Հիսուսի, մյուսը՝ Մովսեսի, և երրորդը՝ Եղիայի համար: Ի՞նչ փառավոր տեսիլք: Հիսուս մեզ հետ ապրեց և հատկապես կյանքի երեք տարիները աշակերտների հետ քարոզեց Հրեաստանի, Փյունիկիայի,

Գալիլիայի շրջանների ժողովրդին, Իր աստվածային փառքը բացեց նրանց առջև: Հիսուսի Պայծառակերպության դրվագը գաղտնի պահվեց Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից մինչև Հիսուսի Հարությունը:

Սիրելինե՛ր, մենք այսօր հավաքվել ենք այստեղ, այս Սուրբ եկեղեցու կամարների տակ՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության հիշատակը մեկ անգամ ևս տոնախմբելու. Նրա աստվածային տեսիլքին անդրադառնալու և մասնակիցը լինելու Իր աշակերտների միջոցով այդ տեսիլքի փոխանցմանը մարդկությանը: Եվ այսօր ինչո՞ւ մենք զրկվենք այդ աստվածային տեսիլքից: Մենք՝ բոլոր հավատացյալներս, նրանք, ովքեր ջանում են սրբությամբ անցկացնել իրենց կյանքը, ովքեր չեն հայհոյում, սուտ չեն խոսում, չեն րամբասում, այդպիսի մարդիկ արժանի են աստվածային տեսիլքին. Աստծու էությունը տեսնելու, Աստծու հետ հաղորդակցության մեջ լինելու և այսպիսով լցվելու, ուրախանալու, ցնծալու և, հոգևորին ձգտելով, այս աշխարհում մեր կյանքը դրախտային կյանքի վերածելու: Եթե հոգևորին չձգտենք այս աշխարհի վրա, եթե դրամը պետք է կապի մեր ձեռքերն ու սիրտը, ապա ո՞րն է կյանքի արժեքը մեզ համար: Ընտանիքում ի՞նչ է դրամը, ուտելիքը, եթե դրանց կողքին Աստծուց մեզ տրվող հոգեկանի ձգտումը, հոգեկանի պահանջը, որը շատ անհրաժեշտ է, բացակայի: Հոգեկանի ձգտումը մեզ օգնում է նախ աստվածորդիներ դառնալու և ապա՝ Աստծու հետևորդները լինելու: Նաև կարևոր ու պատշաճ է, որ մենք դրախտը կարողանանք պատկերացնել և ապրել այն տվյալներով, ինչը մեզ է փոխանցվում Պայծառակերպության խորհրդով: Այն մեզ համար պատուհան, դուռ է բացում դեպի դրախտ, որպեսզի ճանաչենք մեր Տիրոջը, մեր կյանքը մխիթարական լինի, այլ ոչ թե անհույս մի ճանապարհ՝ կորստյան տանող:

Այսպիսի հրաշքները, որոնք մեզ են տրվում Ավետարանի միջոցով, վստահություն են ներշնչում դրախտի և անդենական կյանքի գոյության մասին: Հաճախ մենք, որպես տգետ մարդիկ, չլուսավորված մեր մտքերով, առանց Աստվածաշունչ Մատյանը ընթերցելու, առանց հաղորդակցվելու Սրբոց վարքին, ասում ենք, թե կյանքը սահմանափակվում է մահվամբ: Ո՛չ, մահվամբ չի սահմանափակվում, այլ մահվանից հետո քրիստոնյայի համար մեկ այլ կյանք է սկսվում: Այդ կյանքով է, որ մենք պետք է լիցքավորվենք և հավատանք: Պայծառակերպության հիշատակի տոնախմբությունը մի տեսակ առիթ է մեզ համար, դուռ է, պատուհան է՝ տեսնելու երկնքի իրականությունը աստվածային փառքի տեսիլքով և երանական այդ կյանքի վիճակով:

Ահավասիկ, դուռ այսօր եկել ենք այստեղ՝ այդ տեսիլքին հաղորդվելու և այդ տեսիլքով ձեր մեջ զորացնելու հավատքը, որպեսզի չերկմտեք, առավել հաստատվեք Քրիստոսի հավատքի վրա, որպեսզի հաստատ իմանամ, թե այս կյանքը գերեզմանով չի սահմանափակվում: Այն վերածվում է հոգևոր կյանքի, որի մեկ պատկերը, նմուշը այսօր Պայծառակերպության տոնի առիթով մենք տեսնում ենք, զգում և հավատում:

Թող աստվածային փառքի լույսը Այլակերպության խորհրդով ծագի նաև մեր հոգիների, իմացականության և կյանքի բոլոր օրերի ընթացքում, որպեսզի չսայթաքենք մեր հավատքից, առօրյա հացի ու դրամի համար չուրանանք մեր դավանանքն ու հավատքը, այլ ամուր կերպով կառչած մնանք նրան: Քրիստոսի Պայծառակերպության հիշատակի օրը եթե տուն դարձի ճանապարհին մեզ վրա նույնիսկ ջուր ցանենք, ապա այն համարենք իբրև աստվածային շնորհի մեկ փոքրիկ մասը, իբրև զորություն մեր հոգիների, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: